

ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼԱԲԻՐԻՆԹԵՔԹՈՄԻԱՅԻՑ ԶԵՏՈՎԵՍԻԲՈՒԼԱՅԻՆ ԿՈՄՊԵՆՍԱՑԻԱՆ ԿՈՐԲԱՅԻ ԹՈՒՅՆԻ ԵՎ ՈՐՈՇ ՆՅԱՐԴԱՅԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ԶԱՄԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ
Խալաջի Ն.¹, Զամբարձումյան Լ.Է.², Մանուկյան Լ.Փ.², Չավուշյան Ե.Ա.², Ալոյան Մ.Լ.³, Սարգսյան Ջ.Ս.², Սարգսյան Վ.Յ.²

¹ Ուրմիայի բժշկական գիտությունների համալսարան, Ուրմիա, Իրան

² ԶԶ ԳԱԱ Օրբելու անվ. Ֆիզիոլոգիայի ինստիտուտ, Երևան, Հայաստան

³ Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան, Երևան, Հայաստան

Միակողմանի լաբիրինթեքթոմիայի (ՄԼ) ենթարկված առնետների վրա կատարվել է Դեյտերսի կորիզի միայնակ նեյրոնների ֆոնային և հրահրված արտաբջջային սպայկային ակտիվության հատուկ մաթեմատիկական վերլուծություն, վեստիբուլային կոմպենսացիայի դինամիկայում հետվիրահատական 4 ժամ և 9-35 օր ժամկետներում: Ստուգվել է դրդիչ (Glutamate - GI), արգելակիչ (ԳԱՅԹ) և (Էթանոլամին-Օ-սուլֆատ - ԷՕՍ) նյարդահաղորդիչների համակարգված կիրառման ազդեցությունը նորմալ, պլացեբո-հսկիչ և այն կենդանիների վրա, որոնք բուժվել են կենտրոնական ասիական Naja Naja Oxiana (NOX) կորբայի թույնով (ՄԼ և NOX-ի ներարկումից 9, 15, 35 օր անց): Ինտակատ կենդանիների մոտ ԳԱՅԹ-ի ներարկումից ի հայտ է գալիս տետանիկ (ՏԴ) և հետտետանիկ դեպրեսիա, որը խորանում է դրա կրկնակի ներարկումից հետո: Ինն օր անց ԳԱՅԹ-ի ներարկումից առաջանում է տետանիկ դեպրեսիա և հետտետանիկ պոտենցացիա (ՅՏՊ): ՄԼ-ի 15-րդ օրը հետվիրահատության 4-րդ ժամվա ընթացքում ԳԱՅԹ-ը չի ցուցաբերում արգելակիչ ազդեցություններ: ՄԼ-ի 15-րդ օրը ԷՕՍ-ը առաջացնում է ՏԴ և հետտետանիկ պոտենցացիա (ՅՏՊ), իսկ կրկնակի ներարկումից հետո առաջացնում ուժգին դեպրեսիա՝ ողջ հետստիմուլային գործընթացում: Միևնույն ժամանակ GI-ի և ԷՕՍ-ի համակցված կիրառումը առաջացնում է ՏԴ ՅՏՊ: ՄԼ-ից 35 օր անց ԳԱՅԹ-ի ներարկումը ցուցաբերում է արգելակիչ ազդեցության թույլ վերականգնում և նրան հաջորդող ՅՏՊ: Այդ նույն օրերին GI-ն առաջացնում ՏԴ ՅՏՊ, իսկ ԷՕՍ-ը՝ տետանիկ պոտենցացիա (ՏՊ) ՅՏՊ, առանց ՏԴ-ի: Այս պայմաններում NOX-ի պաշտպանիչ ազդեցությունը դիմադրում է արգելակման զգալի նվազմանը, որը վեստիբուլային կոմպենսացիայի արագացման համար ակնհայտորեն նվազել էր վստած կողմում՝ նեյրոնների արգելակիչ հսկման վաղ կարգավորման պատճառով: Այս բոլորը պայմանավորված է բոլոր օձերի թույնների ազդեցության բարձր ընտրողականությամբ և անդարձությամբ: